

**«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Յայաստան» ՓԲԸ**

**«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Յայաստան» ՓԲԸ  
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ  
ֆինանսական հաշվետվություններին  
կից հայտարարություններ**

**HSBC** 

Ձեր բանկն ամբողջ աշխարհում


## **Բովանդակություն**

|  |   |
|--|---|
| Բանկի ղեկավարության հայտարարությունը   | 3 |
| Համապատասխանության մասին հայտարարություն   | 4 |
| Եզրակացություն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ | 5 |
| Գործունեության ակնարկ և ֆինանսական վերլուծություն  | 6 |

## Բանկի ղեկավարության հայտարարությունը

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Այդ կապակցությամբ բանկի ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման, իսկ շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից դրանց բացահայտման համար,
- ֆինանսական հաշվետվությունները անընդհատության սկզբունքի հիման վրա պատրաստելու համար, քանի դեռ հանգամանքներն այլ կերպ չեն թելադրում,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման, իսկ չհամապատասխանելու դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից այդ թերությունների բացահայտման համար,
- Բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, ՀՀ օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
- Բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ իր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար:



Աստրիդ Քլիֆֆորդ  
Գլխավոր գործադիր տնօրեն



Աստղիկ Իրամբյան  
Գլխավոր հաշվապահ



## **Համապատասխանության մասին հայտարարություն**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (“ՖՀՄՄ”) պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ արտացոլում են Բանկի ֆինանսական վիճակը առ 31 դեկտեմբերի 2010թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը:

## **Եզրակացություն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

Սույն եզրակացությունը կազմված է “Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան” ՓԲԸ-ի Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից 2010թ. ընթացքում իրականացված պլանային ստուգումների և ընթացիկ վերահսկողության հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալը, մեր կարծիքով “Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան” ՓԲԸ-ի գործունեությունը 2010թ. ընթացքում համապատասխանել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի ստորաբաժանում

## Գործունեության ակնարկ և ֆինանսական վերլուծություն

“Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան” ՓԲԸ-ն տրամադրում է ֆինանսական ծառայությունների լայն ընտրանի: Պահպանելով ֆինանսական կայուն և առողջ բազա՝ Բանկը 2010թ. շարունակեց ընդլայնել իր գործառնությունների շրջանակը:

Գործունեության տասնհինգերորդ տարվա ընթացքում շարունակվել են Բանկի համար վերջին տարիներին ուրվագծված կայուն աճի միտումները: Բանկը շարունակեց զարգացնել իր կողմից առաջարկվող ծառայությունները և ավելացնել հաճախորդների քանակը:

2010 թվականը կարելի է որակել որպես հաջողված տարի Բանկի համար: Հայաստանի Հանրապետության տնտեսության վիճակի բարելավումը, Բանկի կողմից որդեգրված աճի ռազմավարությունը և ռիսկերի արդյունավետ կառավարումը նրա հաջողության գրավականը հանդիսացան:

Տարվա ամենամեծ նվաճումներից են կորպորատիվ վարկավորման աննախադեպ աճը և նախորդ տարի մեկնարկած հեռախոսային և ինտերնետային բանկային ծառայությունների զարգացումը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնումը:

Կորպորատիվ վարկերի ծավալը տարվա ընթացքում ավելացել է 67 տոկոսով և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 65 մլրդ ՀՀ դրամ: Մատուցվող ծառայությունների շրջանակը 2010 թ-ին համալրվել է կորպորատիվ բանկոմատային քարտերով, կուտակային խնայողական ավանդներով, ապահովագրական գործակալի ծառայություններով, Չինաստան կատարվող փոխանցումներով, ինչպես նաև ՓՄՁ-ների համար Առևտրի ֆինանսավորման ակադեմիայի ստեղծմամբ:

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի 2010 թվականի շահույթը մինչև հարկումը կազմել է 5.9 մլրդ ՀՀ դրամ, որը Հայաստանի բանկային համակարգում ամենաբարձր ցուցանիշն է: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ընդհանուր ակտիվները կազմել են 144.9 մլրդ ՀՀ դրամ, և ակտիվների մեծությամբ Բանկը շարունակել է մնալ խոշորներից մեկը ՀՀ բանկային համակարգում: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելը կազմել է 85.8 մլրդ ՀՀ դրամ՝ ապահովելով 31.4% աճ նախորդ տարվա համեմատ:

Բանկին շնորհվել է “Euromoney 2010 Գերազանցության մրցանակը” որպես տարվա “լավագույն բանկը Հայաստանում”, իսկ Նյու Յորքյան “Գլոբալ Ֆայնենս” պարբերականի կողմից Բանկը ճանաչվել է Հայաստանում լավագույն բանկը արտարժույթի փոխանակման ծառայությունների գծով:

Այս արդյունքներին հնարավոր չէր լինի հասնել առանց Բանկի թվով 41,600 հաճախորդների գործարար հաջողության, նվիրվածության և աջակցության, ինչպես նաև առանց Բանկի թվով 384 բարձրակարգ աշխատակիցների անսահման ջանասիրության: Հատկանշական են նաև ղեկավարության կողմից ձեռնարկված միջոցառումները ուղղված աշխատակիցների խրախուսման բարձրացմանը, ինչի շնորհիվ բարելավվեց աշխատակիցների ներգրավվածության ինդեքսը:

2010թ. կորպորատիվ պատասխանատվության շրջանակներում Բանկը շարունակել է մասնակցել ավանդական դարձած տեղական, ինչպես նաև Էյչ-Էս-Բի-Սի Խմբի կրթական և


բնապահպանման ծրագրերին: Օրինակ, Բանկը մասնակցել է “Մոլորակի Օր” համաշխարհային ակցիային, HSBC Climate Partnership ծրագրին, կազմակերպել է ծառատունկ և Անտի-Պլաստիկ ծրագրեր, ինչպես նաև իրագործել է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի “Future First”, “JA More than Money”, “Toy/Book/Coat Drive” ծրագրերը Հայաստանում: Բանկը ստորագրել է քառակողմ հուշագիր ՀՀ բնապահպանության նախարարության, “Խոսրովի անտառ պետական արգելոց ՊՈԱԿ”-ի և “Կովկասի բնության հիմնադրամի” հետ, որը նպատակաուղղված է հասարակության էկոգրագիտության և էկոգրոսաշրջության զարգացմանը:

*Ֆինանսական վերլուծություն*

Հարկերի վճարումից հետո Բանկի զուտ շահույթը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմել է 4,557 մլն ՀՀ դրամ, որը 182 տոկոսով բարձր է նախորդ ժամանակաշրջանի ցուցանիշից:

Բանկի զուտ տոկոսային եկամուտը և այլ գործառնական եկամուտն աճել են՝ կազմելով համապատասխանաբար 9,171 և 3,684 մլն ՀՀ դրամ: Գործառնական ծախսերը կազմել են 7,124 մլն ՀՀ դրամ: Բանկի արդյունավետության ցուցանիշը 2010թ-ի համար կազմել է 55.4%: Կապիտալի շահութաբերության ցուցանիշը 2010թ-ի համար կազմել է 22.7%:

2010 թվականի ընթացքում Բանկը չի վճարել շահաբաժիններ՝ շահույթն ուղղելով Բանկի հետագա զարգացմանը: Բանկի ընդլայնման նպատակով 2010 թվականին Բանկի բաժնետերերը կատարել են կանոնադրական կապիտալի համալրում 2,882 մլն ՀՀ դրամի չափով:

  
Ռանգելո Գուկասյան  
Ֆորիիրդի անդամ



  
Արա Ալեքսանյան  
Խորհրդի անդամ